«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

16 դեկտեմբերի, 2025 թ. N 33 - Լ

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածի 1–ին մասը և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 8.1.7 և 14.17.14 կետերը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2025 թ. դեկտեմբերի 16-ի N 33- Լ որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2026 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ 4

2. Գործունեության ծրագրի կազմման հիմքերը և սկզբունքները 4

3. Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտներում իրավիճակի վերլուծություն 5

4. Իրականացվող միջոցառումներ և ժամկետներ 9

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) 2026 թվականի տարեկան գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) կազմվել է՝ ի կատարումն «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածի 1–ին մասի և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության կանոնադրության 8.1.7 և 14.17.14 կետերի՝ նպատակ ունենալով ապահովել Պալատի գործառույթների արդյունավետ իրականացումը:

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գործունեության ծրագիրը կազմվել է՝ ելնելով Պալատի կանոնադրությամբ սահմանված խնդիրներից, այն է.

- Աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման ապահովումը, նրանց մասնագիտական էթիկային և շարունակական մասնագիտական զարգացմանը ներկայացվող պահանջների պահպանումը,
- Աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայության որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատումը,
- Փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորների նկատմամբ ներկայացվող պահանջների պահպանման արտաքին գնահատումը,
- Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության բնագավառների զարգացման համար անհրաժեշտ պայմանների առկայությանն օժանդակումը,
- Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության բնագավառների կարգավորմանն օժանդակումը,
- Հաշվապահական հաշվառման և աուդիտորական մասնագիտության հեղինակության բարձրացումը:

Գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը և դրանց կատարման ժամկետները պլանավորվել են՝ ելնելով Պալատի կանոնադրությամբ սահմանված գործառույթներից, արդյունավետությունից, իրագործման հնարավորությունից և հաշվետվողականության պահանջներից:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հրապարակվել և կիրառվում են ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքները, ամբողջական ՖՀՄՍ-ները, ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ն, կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման օրինակելի հաշվային պլանները և օրինակելի հաշվային պլանների կիրառման հրահանգները, միկրոկազմակերպությունների հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ձեռնարկը, օրինակելի հաշվային պլանը և օրինակելի հաշվային պլանի կիրառման հրահանգը:

2019թ.-ից հետո Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը հրապարակել է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում փոփոխություններ, լրացումներ և նոր ստանդարտներ, որոնց հայերեն թարգմանությունները դեռևս չեն իրականացվել:

3.2 ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

«Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հրապարակվել և կիրառվում են աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտները, մասնագիտական էթիկայի կանոնագիրքը:

2019թ.-ից հետո Հաշվապահների միջազգային դաշնության (այսուհետ՝ ՀՄԴ) Աուդիտի և հավաստիացման միջազգային ստանդարտների խորհուրդը հրապարակել է աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներում փոփոխություններ, լրացումներ և նոր ստանդարտներ, որոնց հայերեն թարգմանությունները դեռևս չեն իրականացվել:

3.3 «ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ - ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑ» ՄՈԴԵԼ

«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» և «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքների համաձայն՝ գործում է հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման նկատմամբ հանրային վերահսկողության գործառույթներ իրականացնող մարմին՝ Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհուրդ (այսուհետ՝ ՀՎԽ), իսկ ոլորտների կարգավորման որոշ գործառույթները պատվիրակվել են մասնագիտացված կառույցներին:

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպությունը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրվել է որպես մասնագիտացված կառույց: Ներկայումս Պալատը հանդիսանում է ոլորտի միակ մասնագիտացված կառույցը, որին 2025թ. դեկտեմբերի 10-ի դրությամբ անդամակցում են 237 աուդիտոր, 355 փորձագետ հաշվապահ, 29 աուդիտորական կազմակերպություն:

2026թ.-ին Պալատը շարունակելու է մշակել, ներդնել և անհրաժեշտության դեպքում բարելավել «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքներով և Պալատի կանոնադրությամբ սահմանված ներքին իրավական ակտերը, ինչը հնարավորություն կտա արդյունավետ և ժամանակին իրականացնել Պալատի խնդիրները և գործառույթները:

3.4 ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Պալատն ունի ՀՄԴ կրթության միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ ԿՄՍ) համապատասխանող որակավորման համակարգ:

Պալատի աուդիտորի և/կամ փորձագետ հաշվապահի որակավորում ստանալու համար ֆիզիկական անձինք պետք է հաջողությամբ հանձնեն որակավորման քննությունները, ունենան բարձրագույն կրթություն և անհրաժեշտ մասնագիտական աշխատանքային փորձ:

Որակավորումները տրվում են անժամկետ:

Պալատի որակավորման համակարգը հիմնված է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (այսուհետ՝ ACCA) որակավորման համակարգի վրա: Աուդիտորի որակավորման քննությունների ծրագիրը բաղկացած է 7 առարկաներից, իսկ փորձագետ հաշվապահինը՝ 6 առարկաներից:

Պալատի որակավորման քննություններից ազատման կարգերով սահմանված են որակավորման քննությունների ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատումներ:

ACCA-ի հավատարմագրմամբ 2022-26թթ.-ին Պալատի որակավորման ծրագրի բոլոր քննական 7 առարկաների քննությունները հաջողությամբ հանձնածներին շնորհվում են ACCA 8 առարկաների քննություններից ազատումներ:

3.5 ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Պալատի ֆիզիկական անձ անդամների շարունակական մասնագիտական զարգացման պահանջը սահմանված է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Աուդիտորական գործունեության մասին» և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքներով: Այն հանդիսանում է նաև ԿՄՍ-ների և Պալատի կողմից ստանձնված ՀՄԴ անդամակցության պարտադիր պահանջ:

Շարունակական մասնագիտական զարգացման նպատակն է տնտեսության տարբեր բնագավառներում Պալատի անդամից պահանջվող մասնագիտական աշխատանքի բարձր ստանդարտների ապահովման համար անհրաժեշտ գիտելիքների պարբերաբար նորացումը: Այն հնարավորություն կտա հանրությանը տրամադրել բավարար երաշխիքներ, որ Պալատի անդամը տիրապետում է հաշվապահական հաշվառման, հարկային, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, աուդիտի և մասնագիտությանն առնչվող ոլորտների վերաբերյալ մասնագիտական արդի գիտելիքներին: Պալատի անդամ աուդիտորները և փորձագետ հաշվապահները պարտավոր են Պալատի անդամ դառնալու տարվան հաջորդող տարվանից սկսած անցնել շարունակական մասնագիտական զարգացում: Շարունակական մասնագիտական զարգացման տևողությունը յուրաքանչյուր օրացուցային տարվա համար չպետք է պակաս լինի 20 ժամից, իսկ յուրաքանչյուր երկու հաջորդական տարիների համար չպետք է պակաս լինի 80 ժամից:

Շարունակական մասնագիտական զարգացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Պալատի աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամների շարունակական մասնագիտական զարգացման կարգով (ՇՄԶ կարգ):

3.6 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կարևորվում է Պալատի կողմից աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայության որակի հսկողության, ինչպես նաև փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորների նկատմամբ ներկայացվող պահանջների պահպանման արտաքին գնահատման (այսուհետ՝ Արտաքին գնահատում) համակարգի ներդրումը:

Արտաքին գնահատման ընթացակարգերը մշակվում և հաստատվում են «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ ֆինանսների նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 7-ի «Աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերը հաստատելու մասին» թիվ 420-Ն հրամանի և Պալատի

ներքին իրավական ակտերի համաձայն հաստատվել է Պալատի կողմից 2026թ.-ին արտաքին գնահատման ենթակա աուդիտորական կազմակերպությունների ցանկը:

Պալատի Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովը, արտաքին գնահատում իրականացնող փորձագետների խումբը, ըստ անհրաժեշտության, արտաքին գնահատման արդյունքներով պետք է ներկայացնի հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող ՀՀ նորմատիվ իրավական ակտերում և Պալատի ներքին իրավական ակտերում փոփոխությունների և (կամ) լրացումների առաջարկներ և (կամ) արտաքին գնահատմանը վերաբերող (այդ թվում՝ նաև վերը նշված հրամանով սահմանված Արտաքին գնահատման ընթացակարգերին) իրավական ակտերի նախագծեր:

4. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐ

4.1 ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

2026թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

h/h	***Միջոցառում***	***Ժամկետ***
1	Աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման քննությունների կազմակերպում, անցկացում և վերահսկողություն (երկու քննաշրջան)	I կիսամյակ և II կիսամյակ
2	Աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման համակարգի ներքին իրավական ակտերի նախագծերի մշակում և (կամ) փոփոխություն	Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշ-տության
3	Աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում ստանալու համար դիմած անձանց՝ սահմանված պահանջներին համապատասխանության ուսումնասիրություն և որակավորման շնորհում	Տարվա ընթացքում՝ պարբերաբար
4	Աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում ստացած անձանց՝ սահմանված պահանջների խախտման կամ անհամապատասխանության ուսումնասիրություն և որակավորման չեղարկում	Տարվա ընթացքում՝ պարբերաբար
5	Որակավորման քննություններից ազատումներ ստանալու համար դիմած անձանց՝ սահմանված պահանջներին համապատասխանության ուսումնասիրություն և քննություններից ազատում	Տարվա ընթացքում՝ պարբերաբար

4.2 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Որակավորման քննությունների նախապատրաստման դասընթացներ

Պալատն իրականացնում է ԿՄՍ-ներին համապատասխան պրոֆեսիոնալ հաշվապահի և աուդիտորի որակավորում շնորհող կրթական ծրագիր, որը ներառում է համապատասխան դասընթացների իրականացում և քննությունների անցկացում:

Շարունակական մասնագիտական զարգացման դասընթացներ

Տե՛ս 4.3 «Շարունակական մասնագիտական զարգացում» բաժինը:

Այլ դասընթացներ

Պալատը կազմակերպում է 50 ժամ տևողությամբ «Հաշվապահական հաշվառում և հարկային օրենսդրություն» թեմայով դասընթաց՝ սկսնակ և գործող հաշվապահների համար:

ԲՈՒՀ-երի մասնագիտական կրթություն

2026թ.-ին Պալատը մասնագիտական մեծ ներուժով և փորձով աջակցելու է բուհական համակարգին՝ ուսանողների կրթության և մասնագիտական զարգացման գործընթացներում: Մասնավորապես, Պալատն աջակցություն է ցուցաբերելու կրթական ծրագրերի մշակմանը և բարելավմանը, աջակցելու է ուսանողների պրակտիկաների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպմանը, ինչպես նաև մասնակցելու է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին:

2026թ.-ին նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

հ/հ	***Միջոցառում***	***Ժամկետ***
1	Աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման դասընթացներ (երկու քննաշրջան)	I կիսամյակ և II կիսամյակ
2	«Հաշվապահական հաշվառում և հարկային օրենսդրություն» թեմայով երկու դասընթաց	I կիսամյակ և II կիսամյակ
3	Աուդիտորների և փորձագետ հաշվապահների որակավորման ծրագրում փոփոխություններ՝ ՀՄԴ կրթական ստանդարտների պահանջներին համապատասխան	Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության
4	Որակավորման քննական առարկաների դասագրքերի	Տարվա

	մշակում, թարգմանություն, խմբագրում և վերանայում	ընթացքում՝ ըստ անհրաժեշ-տության

4.3 ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Պալատի ֆիզիկական անձ անդամների շարունակական մասնագիտական զարգացմանը ներկայացվող պահանջների պահպանումը հանդիսանում է Պալատի առաջնահերթություններից: Պալատն իրականացնում է աշխատանքներ՝ Պալատի անդամների շարունակական մասնագիտական զարգացման կարիքները բավարարելու համար:

2026թ.-ին նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

h/h	***Միջոցառում***	***Ժամկետ***
1	Շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) դասընթացներ, սեմինարներ, վերապատրաստումներ և նմանատիպ այլ միջոցառումներ աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտների, Մասնագիտական էթիկայի կանոնագրքի, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հարկային օրենսդրության, Արտաքին գնահատման և ՇՄԶ կարգով սահմանված այլ ոլորտների վերաբերյալ (80 ժամ ընդհանուր տևողությամբ ՇՄԶ միջոցառումների ծրագիր)	Տարվա ընթացքում՝ պարբերաբար
2	Այլ կազմակերպությունների կողմից իրականացվող մասնագի-տական դասընթացների և սեմինարների ուսումնասիրում՝ ՇՄԶ միջոցառում ճանաչելու համար	Տարվա ընթացքում՝ պարբերաբար
3	Հաշվապահական հաշվառման, աուդիտորական գործունեության, հարկային և հարակից այլ ոլորտների խնդրահարույց հարցերի քննարկումների կազմակերպում «կլոր սեղան» ձևաչափով	Տարվա ընթացքում՝ պարբերաբար
4	Աուդիտորական կազմակերպությունների հետ քննարկում, իրազեկում և սեմինարների կազմակերպում Արտաքին գնահատման ընթացակարգերի և իրականացված արտաքին գնահատման արդյունքների վերաբերյալ	Տարվա ընթացքում՝ պարբերաբար

5	Պալատի անդամների ներկայացրած ՇՄՁ հաշվետվությունների ուսումնասիրության, տվյալների ամփոփման և վերլուծության ընթացակարգերի վերանայում	Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշ-տության
6	Պալատի անդամների ներկայացրած ՇՄՁ հաշվետվությունների ուսումնասիրություն	Տարվա ընթացքում՝ պարբերաբար
7	ՇՄՁ պահանջները չպահպանելու դեպքում Պալատի անդամների նկատմամբ պատասխանատվության միջոցների կիրառում	II, III և IV եռամսյակներ

4.4 ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՈՒՄ

Պալատին անդամակցում են աուդիտորները, փորձագետ հաշվապահները և աուդիտորական կազմակերպությունները: Պալատին անդամակցումը կատարվում է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, Պալատի կանոնադրության և Պալատի անդամակցության կարգի պահանջներին համապատասխան:

Ռեեստրի վարումն իրականացվում է Պալատի կողմից սահմանված ռեեստրի վարման կարգով:

2026թ.-ին նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

h/h	***Միջոցառում***	***Ժամկետ***
1	Պալատին անդամակցելու համար դիմած անձանց՝ սահմանված պահանջներին համապատասխանության ուսումնասիրություն և անդամակցության որոշում	Տարվա ընթացքում՝ պարբերաբար
2	Պալատի անդամների՝ սահմանված պահանջների խախտման կամ անհամապատասխանության ուսումնասիրություն և անդամակցության չեղարկում	Տարվա ընթացքում՝ պարբերաբար
3	Պալատին անդամակցող անդամների կամ անդամակցությունը դադարեցրած անձանց վերաբերյալ տվյալների՝ ռեեստրում գրանցում	Տարվա ընթացքում՝ պարբերաբար
4	Էլեկտրոնային եղանակով Պալատի անդամների ռեեստրի	Տարվա

	վարում և ռեեստրում ներառված՝ Պալատի կողմից սահմանված տեղեկատվության՝ հանրությանը հասանելիության ապահովում	ընթացքում՝ պարբերաբար
5	Ռեեստրում ներառված տվյալների թարմացում՝ ներկայացված տեղեկատվության հիման վրա	Տարվա ընթացքում՝ պարբերաբար
6	Ռեեստրում տվյալների ներառման և փոփոխության վերաբերյալ ՀՎԽ-ին ներկայացում	Տարվա ընթացքում՝ պարբերաբար

4.5 ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Պալատի կարևորագույն խնդիրներից է իրականացնել աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայության որակի հսկողության, ինչպես նաև փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորների նկատմամբ ներկայացվող պահանջների պահպանման արտաքին գնահատում՝ «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մշակված և հաստատված Արտաքին գնահատման ընթացակարգերի հիման վրա:

2026թ.-ին նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

h/h	***Միջոցառում***	***Ժամկետ***
1	Աուդիտորական կազմակերպություններում արտաքին գնահատման իրականացում	սահմանված ժամանակա-ցույցի համաձայն
2	Մոնիթորինգի իրականացում	Տարվա ընթացքում
3	Արտաքին գնահատման արդյունքներով հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող ՀՀ նորմատիվ իրավական ակտերում և Պալատի ներքին իրավական ակտերում փոփոխությունների և (կամ) լրացումների առաջարկներ և (կամ) Արտաքին գնահատմանը վերաբերող (այդ թվում նաև՝ Հրամանով	I կիսամյակ

	սահմանված Արտաքին գնահատման ընթացակարգերին) իրավական ակտերի նախագծեր	
4	Պալատի անդամների հետ քննարկում, իրազեկում և սեմինարների կազմակերպում արտաքին գնահատման ընթացակարգերի վերաբերյալ	Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության
5	2027թ.-ին արտաքին գնահատման ենթակա աուդիտորական կազմակերպությունների ցանկի և արտաքին գնահատում իրականացնելու տարեկան ժամանակացույցի հաստատում	IV եռամսյակ

4.6 ՊԱԼԱՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

2026թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

հ/հ	***Միջոցառում***	***Ժամկետ***
1	Պալատի ինտերնետային կայքի և տեխնիկական բազայի թարմացում, հավելյալ գործիքակազմի մշակում	Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության
2	Փաստաթղթաշրջանառության (անդամ կազմակերպությունների հաշվետվությունների ներկայացում, ռիսկերի վրա հիմնված արտաքին գնահատման կազմակերպությունների ընտրություն) էլեկտրոնային համակարգի մշակում	III կիսամյակ
3	Որակի կառավարման միջազգային ստանդարտի, Պրոֆեսիոնալ հաշվապահի վարքագրքի թարմացված տարբերակի թարգմանություն և խմբագրում	Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության
4	Պալատի հանձնաժողովների 2025թ. տարեկան գործունեության մասին հաշվետվությունների հաստատում	I եռամսյակ

5	Պալատի 2025թ. տարեկան գործունեության մասին հաշվետվության, ֆինանսական հաշվետվությունների հաստատում	II եռամսյակ
6	Պալատի հերթական ընդհանուր ժողովի կազմակերպում	II եռամսյակ
7	Պալատի հանձնաժողովների 2027թ. գործունեության ծրագրերի հաստատում	IV եռամսյակ
8	«Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» և «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքներից և Պալատի կանոնադրությունից բխող այլ միջոցառումներ	Տարվա ընթացքում՝ ըստ անհրաժեշտության
9	Մասնակցություններ տեղական, միջազգային կոնֆերանսներին, գիտաժողովներին և այլ միջոցառումներին	Տարվա ընթացքում՝
10	Պալատի անդամ փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունում չաշխատող աուդիտորների նկատմամբ մասնագիտական օրենսդրությամբ ներկայացվող պահանջների պահպանման արտաքին գնահատման իրականացման միջազգային փորձի ուսումնասիրություն և համապատասխան առաջարկների ներկայացում	III եռամսյակ
11	ՓԼ/ԱՖ/ՋՈՋՏՖ օրենսդրության շրջանակներում Պալատի անդամ հաշվետու անձանց ռիսկերի գնահատման մեթոդաբանության, կանխարգելիչ և վերահսկողական գործիքների կիրառման փորձի ուսումնասիրում և ըստ անհրաժեշտության Պալատի համապատասխան կարգերում լրացումների և փոփոխությունների իրականացում	III եռամսյակ

4.7 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

<u>ՀՄԴ</u>

Պալատը 2005թ.-ից հանդիսանում է ՀՄԴ թղթակից անդամ:

Պալատն իրականացնելու է նախապատրաստական աշխատանքներ առաջիկա տարիների ընթացքում ՀՄԴ-ի լիիրավ անդամ դառնալու համար:

Պալատը շարունակելու է խորացնել կապերը ՀՄԴ-ի հետ, այդ թվում՝ առցանց սեմինարներին ու տեղեկատվություններին Պալատի անդամների հասանելիությունը ապահովելու, միջազգային փորձի ու մասնագիտական ստանդարտների վերաբերյալ քննարկումներ իրականացնելու, ՀՄԴ-ի կողմից կազմակերպվող կոնֆերանսներին, ժողովներին մասնակցելու համար:

ACCA

Անհրաժեշտության դեպքում իրականացվելու են հանդիպումներ, քննարկումներ ACCA-ի և BPP դասագրքերի հրատարակչի ներկայացուցիչների հետ՝ որակավորման ծրագրի առարկաների դասագրքերի հետագա թարմացումները իրականացնելու համար:

ԱՊՀ և ԵԱՏՄ

2021թ.-ի դեկտեմբերին ստորագրվել են համաձայնագրեր՝ ԱՊՀ և ԵԱՏՄ պետությունների մասնագիտացված կազմակերպությունների խումբ (խորհրդատվական մարմին) ստեղծելու վերաբերյալ՝

1. Соглашение о создании Евразийской группы бухгалтеров и аудиторов
2. Соглашение о создании Консультативного Совета аудиторов ЕАЭС.

Նախատեսվում է ստորագրված համաձայնագրերի շրջանակներում աշխատանքների իրականացում, որոնք միտված են ԱՊՀ և ԵԱՏՄ պետությունների տարածքներում մասնագիտության առջև ծառացած խնդիրների լուծմանը, մասնագիտության հեղինակության բարձրացմանը, մասնագիտական ստանդարտների (փոփոխությունների) նախագծերի քննարկմանը, փորձի փոխանակմանը, աուդիտորական ծառայությունների մատուցման ընդհանուր շուկայի ձևավորմանը (ազատականացմանը), որպես ՀՄԴ-ի ցանցային գործընկեր անդամակցմանը:

Այլ

Պալատն աշխատանքներ է իրականացնելու օտարերկրյա կամ միջազգային համապատասխան մասնագիտական կազմակերպությունների/կառույցների հետ՝ հարաբերություններ ձևավորելու/խորացնելու նպատակով: